# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՃԱՄԲԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Ճամբարակ համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք.Ճամբարակ, (0265)22255, chambarak.gegharquniq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

25 ՀՈՒԼԻՍԻ 2024թվականի N 806-Ա

### ՃԱՄԲԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2022Թ-Ի ՄԱՅԻՍԻ 20-Ի N 123-Ա ԵՎ ՇՈՂԱԿԱԹ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2022Թ-Ի N 026-Ա ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ ՉԵՂՅԱԼ ՀԱՅՏԱՐԱՐԵԼՈՒ ԵՎ ՃԱՄԲԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԱՂԵՏՆԵՐԻ ՌԻՍԿԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ և 41-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետերով.

## Ո Ր Ո Շ Ու Մ Ե Մ՝

1. Հաստատել՝
   1) Աղետների ռիսկի կառավարման (այսուհետ՝ ԱՌԿ) խորհրդի կազմը՝ համաձայն հավելված N 1-ի,
   2) ԱՌԿ խորհրդի աշխատակարգը և գործառույթները՝ համաձայն հավելված N 2-ի:
2. Համայնքի ղեկավարի առաջին տեղակալ Ռոբերտ Օհանյանին՝ սույն որոշման 1-ին կետով ստեղծված ԱՌԿ խորհրդի կազմում ընդգրկված պաշտոններում զբաղեցրած կամ նոր նշանակված անձանց 5-օրյա ժամկետում ծանուցել սույն որոշման մասին:
3. Ուժը կորցրած ճանաչել Ճամբարակ համայնքի ղեկավարի 2022թ-ի մայիսի 20-ի N 123-Ա և Շողակաթ համայնքի ղեկավարի 2022թ-ի N 026-Ա որոշումները:
4. Որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

**Համայնքի ղեկավար՝** **ՎԱՉԳԵՆ ԱԴԱՄՅԱՆ**

20 __ թ. _____ ____
ք.Ճամբարակ